



Լրատու Newsletter




ԳԵՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk

Ապրիլ 2018
Լրատու թիվ 12

Ողջոյնի Խօսք



Յունուարի 7-ին Տէր Շնորհք Քահ. Բաղդասարեանի օրհնութեամբ վերսկսեցին Վարժարանի երկրորդ եռամսեակի աշխատանքները: Տէր Շնորհք Քահ. Բաղդասարեանը յունուարի 7-ի առաւօտեան դպրոցում երեխաներին բացատրեց Սուրբ Ծննդեան և Աստուածայայտնութեան Հրաշափառ տօնի խորհուրդը:

Փետրուարի 3-ին Վարժարանի Ծնողական Յանձնախումբը կազմակերպեց Ընդհանուր Գիտելիքի մրցոյթը: Մրցոյթի հարցերը ինչպէս միշտ այս տարի նոյնպէս պատրաստել էր պարոն Հրաչ Թոքատլեանը, երեկոն վարեց վարժարանի նախկին ուսուցչուհի Անի Քինգ Անդերսոնը:

Մարտի 11-ին տօնեցինք Մայրերի օրը, իսկ մարտի 18-ին Սուրբ Զատիկը:

Մարտի 11-ին և 18-ին իններորդ դասարանների աշակերտները յանձնեցին հայոց լեզուի գրաւոր, բանաւոր և կարդալու աւարտական քննութիւնները:

2017-18 ուսումնական տարւայ երկրորդ եռամսեակի ընթացքում կատարած աշխատանքների մասին Դուք կկարդաք այս համարում:

Զատկական տօների առթիւ մարտի 25-ին, ապրիլի 1-ին և ապրիլի 8-ին վարժարանի արձակուրդներ են:

2018թ ապրիլի 15-ին կը վերսկսեն վարժարանի երրորդ եռամսեակի աշխատանքները:

Շնորհարում եմ բոլորիդ Սուրբ Յարութեան տօնի առթիւ

Քրիստոս Յարեալ ի մեռելոց

Օրհնեալ է Յարութիւնը

Քրիստոսի



Ռ. Թաթուլեան
Տնօրինուհի



Դպրոցէն ներս ունինք “Առաջարկներու Տուփ” մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:



Ընդհանուր Գիտելիքների Մրցույթ



Փետրուրի 3-ին տեղի ունեցավ մեր աւանդական «Հարց ու պատասխան»-ի երեկոն: Մասնակիցները մեծագոյն սիրով և ոգևորութեամբ հաւաքուել էին Թուայֆորդի Աւագ դպրոցի սրահում՝ նորից «ստուգելու» իրենց ընդհանուր գիտելիքների պաշարը, մրցելու կամ պարգապէս զուարճանալու: Երեկոն վարում էին ծրագրի հեղինակ Հրաչ Թոքատեանը եւ Անի Քինգ-Անդրվուդը: Ձեռնարկը էլ աւելի ջերմացրեց ուստեսների ճոխ սեղանը: Ներկաները մեծ հաճոյքով վայելեցին Վարժարանի Ծնողական Յանձնախմբի շնորհալի տիկնանց պատրաստած համեղ կերակուրներն ու անուշեղէնները: Երեկոն իրաւամբ բազում յիշարժան պահեր և դրական լիցքեր հաղորդեց մասնակիցներին:



Our school's annual social event that always creates a fun competitive atmosphere, took place on February 3rd at Twyford Secondary School. The event was accompanied by delicious food and great company. The Parents' Committee presented an array of scrumptious dishes and made sure that everyone was catered for. The questions were prepared by Mr Hratch Tokatlian and the quiz was led by Mrs Ani King-Underwood. A special thank you goes to all involved in organising our popular Quiz Night.



Սուրբ Վարդանանց Տոն

Ինչպես ամեն տարվա փետրվարին, այնպես էլ այս տարի Գեորգ Թախթայան Կիրակնօրյա Ազգային վարժարանը նշեց Վարդանանց տոնը: Այն տեղի ունեցավ փետրվարի 11-ին:

Օրվա խորհուրդը ներկաներին փոխանցեց տիկին Լենա Գիւլիսանճեանը: Այնուհետև ելույթ ունեցան մանկապարտեզի սաները, նախակրթարան1, նախակրթարան2, Ա, Բ, Գ, Դ, Ե, Ը դասարանների աշակերտները:

Նրանց ելույթներում ընդգրկված էր թե՛ Վարդանանց պատերազմի և թե՛ հայրենասիրության վերաբերյալ ասույթներ:

Հանդեսի վերջում աշակերտները ակտիվորեն մասնակցեցին Վարդանանց պատերազմին առնչվող հարցաշարին, որոնք պատրաստել էին արևմտահայերեն բաժնի ութերորդ դասարանի աշակերտները իրենց ուսուցչուհի տիկ Հրանուշ Աթանոսեանի ղեկավարությամբ: Վիկտորինայի հաղթողները պարգևատրվեցին մրցանակներով:



As per tradition, on the 11th February 2018, the Feast of Vartanants was commemorated at school as the Battle of Avarayr is noted for being one of the most significant battles in the Armenian History. The headteacher welcomed the parents and guests who came to celebrate the event with us. Then, Mrs Lena Kulkhanjian spoke about the events that led to the Battle of Avarayr in 451 A.D and its religious and nationalistic importance. Then pupils of all ages sang and recited poems to glorify our national hero and this sacred battle. At the end, the year 8 pupils led an interactive quiz that they had prepared with their teacher Mrs Hranoush Atanossian and created a competitive atmosphere. Pupils who answered the questions correctly were rewarded with gifts.





Տեր Շնորհքի Այցելությունը

Մարտի 4-ին Տեր Շնորհքը այցելեց դպրոց: Նա աշակերտներին այնուհետև ծնողներին և հոգաբարձուներին բացատրեց Մեծ Պահքի իմաստն ու խորհուրդը:

On Sunday 4th March 2018 Fr. Shnork Bagdassarian, Pastor of St Sarkis Armenian Church, visited Kevork Tahta Armenian Community Sunday School and presided over the Morning Assembly. Fr Shnork conducted a short church service with active participation of school children. It was a joy to see the school's pupils singing Armenian Liturgical hymns and reciting prayers in Armenian. During the short homily Fr Shnork explained the meaning of Great Lent and taught the children the importance of prayer and being kind to each other. Then, Fr Shnork ran a small discussion group with some parents and school governors.

The topic of discussion was about the Great Lent, fasting and its spiritual significance. This session, which lasted just over 30 minutes, was based on chapter 6 of Mathew's Gospel. Fr Shnork stated that fasting alone does not offer any spiritual fulfilment. It should be accompanied by prayer and good deeds. *'Fasting, prayer and good deeds are the three pillars of spiritual fulfilment as the basis of our Lenten preparation for Easter'*, he said.

The lively discussion was very interesting, educational and highly recommended. It was completed by some questions and answers.





Մայրերի Օր

Այս տարի գարնան երկրորդ կիրակի օրը, մարտի 11-ին՝ Գևորգ Թահթայան Կիրակնօրյա Ազգային վարժարանում նշեցին մայրերի օրը: Աշակերտները պատրաստել էին բանաստեղծություններ մայրերի օրվա առիթով և բարձր ծափահարությունների ներքո խումբ-խումբ արտասանեցին: Բոլոր արտասանված բանաստեղծությունները գեղեցիկ էին, սակայն ավելի քաղցր էին հնչում մեր աշակերտների շուրթերից: Ուսուցչուհի տիկ.Ժենյա Ներսիսյանն իր հուզից և բեմական արտասանությամբ ներկայացրեց Պարույր Սևակի «Մոր Ձեռքերը» բանաստեղծությունը:

Օրվա վերջում վիճակահանություն անցկացվեց բոլոր ներկա մայրերի համար և ուսուցչուհի Գայանե Հակոբյանը մի գեղեցիկ նվեր ստացավ վիճակայանության արդյունքում:

On March 4th, K Tahta Community Sunday School celebrated Mother's Day with a special morning assembly where the pupils recited heartfelt poems for their mothers. Mrs Jenia also recited Paruyr Sevak's Mor Dzerkere (Mother's Hands) poem that moved everyone profoundly. There was also a prize draw for all the mothers present and one lucky winner received a nice gift.



Քննություններ



Մարտի 11-ին և 18-ին համապատասխանաբար տեղի ունեցան Վարժարանի աւարտական դասարանների (արեւելահայերէն և արեւմտահայերէն) քննութիւնները:

Քննութիւնները անցկացուեցին երեք բաժիններով՝ բանաւոր (Մարտի11-ին), ընթերցանութեան և ստեղծագործական (Մարտի 18-ին): Աշակերտները պատասխանատուութեան բարձր զգացումով մասնակցեցին քննութիւններին:

Քննական Յանձնախմբի անդամներն էին Սիլվա Շամմասեանը եւ Դոկ. Գառնիկ Թարվերդին:

Քննական բոլոր նիւթերը պատրաստել էր Սիլվա Շամմասեանը:



On March 11th and 18th the final exams for the leavers took place at school. Pupils from the Western and Eastern Armenian classes, took the exams seriously and participated in the reading comprehension, written and oral exams prepared by Mrs Silva Shamassian who also invigilated the exams with Dr Karnik Tarverdi and Mrs Ruzanna Tatulian. Results will follow.



Սուրբ Զատիկ



Սոյն թւականի Մարտի 18-ին աւարտեց վարժարանի կրթական երկրորդ եռամսեակը: Արձակուրդից առաջ վարժարանի հոգաբարձուները, ուսուցիչները, աշակերտներն ու իրենց ընտանիքները, վարժարանի բարեկամները առիթ ունեցան հանդիպելու և միասին տօնելու Յիսուս Քրիստոսի Յարութեան տօնը՝ Սուրբ Զատիկը:

Վարժարանի ծնողական յանձնախումբը ինչպէս ամէն տարի, եռամսեակի այս վերջին օրը, Զատիկական տօների առթիւ պատրաստել էր գեղեցիկ անակնկալներ:

Ծնողները եւ այցելուները մեծ ուրախութեամբ գնեցին յանձնախմբի պատրաստած աւանդական պասկաները, իսկ վիճակախաղի տոմս գնողներից բախտաւորները շահեցին գեղեցիկ նւերներ:

Գեղորգ Թահթաեան վարժարանի մեծ ընտանիքը բարձր տրամադրութեամբ հրաժեշտ տւեց դպրոցին, տօնելու Սուրբ Զատիկը:

On the last day of the Spring Term, March 18th, the pupils and their families as well as the teachers and all present had a pleasant Easter Celebration with tasty food and lots of Easter related surprises and tombola organised by the Parents' Association. Everyone left school with high spirit in anticipation of an enjoyable Easter break.





Դպրոցի 40 Ամեակը

40th Anniversary Celebration Booklet

Յարգելի Հայրենակից

Լոնդոնի Գ Թահթեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանը հիմնադրվել է 1978 թականին Բրտանահայ Համայնքային և Եկեղեցական խորհրդի հովանաւորութեամբ և Գևորգ Թահթայի բարերարութեամբ: Վարժարանն իր գործունէութեան ընթացքում դարձել է կայացած կրթական հաստատութիւն, որտեղ սովորել են հայոց լեզու և հայեցի կրթութիւն են ստացել հարիւրաւոր բրիտանահայ երեխաներ:

Այս տարի լրանում է վարժարանի հիմնադրման 40 ամեակը: Այդ առթիւ հոկտեմբերի 13-ին կազմակերպելու ենք յոբելենական երեկոյ: Մենք պատրաստելու ենք նաև գրքոյկ, որտեղ զետեղելու ենք վարժարանի կատարած աշխատանքները 40 տարիների ընթացքում, ինչպէս նաև վարժարանի բարեկամների բարեմաղթանքները: Շատ գնահատելի է, եթէ այդ գրքոյկի մէջ կարողանայինք տեղադրել Ձեր բարեմաղթանքները վարժարանի գործունէութեան վերաբերեալ:

Խնդրում ենք Ձեր բարեմաղթանքները ուղարկել մինչև մայիսի 20-ը:

Կանխաւ շնորհակալութիւն,

Dear parent/guardian and supporter,

2018 marks the 40th anniversary of K. Tahta Armenian Community Sunday School, to celebrate this important milestone, we are organising a gala evening of dinner and dance, and performance on the 13rd October 2018 (details to follow).

We are also producing a booklet for complimentary distribution on the evening. That is now open for purchase for those who wish to advertise their business or simply give their messages, see below for details:

Booklet size: A5

Print: Colour

Full page: £60

Half page: £35

Closing date: 20th May 2018

Please email your business logo/message in PDF format with your preferred size to:

Lena Kulkhanjian; Email: lena-k@hotmail.co.uk

We require advance payment (online bank transfer, cheque or cash) to confirm your registration!

Bank Details: Santander, Sort Code 090666, Account Number 43610192 (please quote reference "40TH BOOKLET")

Cheques payable to: K. Tahta Armenian Community Sunday School

Send to: Garo Karabeyekian, 3 Harewood Road, Syon Park, London TW7 5HB

Cash: Acceptable at school

The deadline for messages is 20th May.

We appreciate your ongoing support!

Kind regards,

K. Tahta Armenian Community Sunday School's
Headteacher and Governing Body

2017-2018 Տարեշրջան



Առաջին եռամսեակ 10 Սեպտ. 2017 – 10 Դեկտ. 2017 Term I 10 September 2017 – 10 December 2017	
10 Սեպտեմբեր 10 September	Վերամուտ Back to school
15 Հոկտեմբեր 15 October	Ծնողական Ընդհանուր Ժողով Parents' Meeting
22 Հոկտեմբեր 22 October	Մշակույթի Օր - Թարգմանչաց Տօն Culture Day
29 Հոկտեմբեր 29 October	Արձակուրդ Half-Term Break
10 Դեկտեմբեր 10 December	Նոր Տարուայ Հանդես New Year's Celebration
Երկրորդ եռամսեակ 7 Յունուար 2018 – 18 Մարտ 2018 Term II 7 January 2018 – 18 March 2018	
03 Փետրուար 03 February	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում Quiz Night
11 Փետրուար 11 February	Վարդանանց Տօն St Vartan's Day
18 Փետրուար 18 February	Արձակուրդ Half-Term Break
11 Մարտ 11 March	Մայրերու Օր Mothers' Day
18 Մարտ 18 March	Զատկուայ Հանդես Easter Celebration
Երրորդ եռամսեակ 15 Ապրիլ 2018 – 8 Յուլիս 2018 Term III 15 April 2018 – 8 July 2018	
6 Մայիս 6 May	Աշակերտական գիտելիքներու մրցում Quiz for students
20 Մայիս 20 May	Մարզական Օր Sports' Day
27 Մայիս 27 May	Արձակուրդ Half-Term Break
24 Յունիս 24 June	Դաշտահանդես School BBQ
8 Յուլիս 8 July	Ամավերջի Հանդես End of Year Assembly

Խմբագիրներ՝ Տիկ Ստելլա Թարվերդի, Տիկ Թամար Մինասեան,
 Տիկ Տաթև Թարվերդի, Տիկ Մարինա Մարդանեան
 Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
 Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլիանճեան